

Անհապաղ թողարկման համար
25-ը մայիսի, 2011թ.

Պատասխանատու՝ Հեղինե Մանասյան
ՀՌԿԿ-Հայաստանի տնօրեն
Էլ.-փոստ՝ heghine@crrc.am
հեռ.՝ 58-13-30, 58-14-50

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնները հրապարակեցին ընտրանքային հարցման յոթերորդ շրջափուլի հիմնական արդյունքները

Հայաստանի Հանրապետություն, Երևան – 2011թ. մայիսի 25-ին՝ ժամը 12-ին, «Կոնգրես» հյուրանոցի «Պիկասո» սրահում Եվրասիա համագործակցություն հիմնադրամի Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ (ՀՌԿԿ) ծրագրի հայաստանյան կենտրոնի տնօրեն Հեղինե Մանասյանը ներկայացրեց 2010 թվականի աշնանը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի շուրջ 6000 տնային տնտեսություններում իրականացրած Կովկասյան բարոմետրի ամենամյա ընտրանքային հետազոտության որոշ արդյունքներ:

Մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեց ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյանը՝ կարևորելով տեղեկատվության արժեքը, դրա հավաքագրումն ու վերլուծումը: Այդ առումով պարոն Երիցյանը բարձր գնահատեց Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների նման հասարակական կազմակերպությունների դերը, որոնք հաճախ ուղղակի կամ անուղղակի ձևով զգալի ծառայություններ են մատուցում հասարակությանը, այդ թվում նաև պետական կառավարման մարմիններին՝ հավաքագրելով արժեքավոր տվյալներ, որոնք օգնում են հասկանալու և գնահատելու իրավիճակն այս կամ այլ բնագավառում:

ՀՌԿԿ Կովկասյան բարոմետր ծրագրի (նախկինում՝ Տվյալների հավաքագրման նախաձեռնություն) շրջանակներում 2004թ. ի վեր միասնական մեթոդաբանությամբ միաժամանակ իրականացվող հարցումների նպատակը հարավկովկասյան երկրներում սոցիալական, քաղաքական և տնտեսական գործընթացների վերաբերյալ համադրելի և արժանահավատ տվյալների հավաքագրումն է:

2010թ. տվյալները ցույց են տալիս, որ հարավկովկասյան երկրներում հանրությանը շարունակել են առավել հուզել տնտեսական ու քաղաքական խնդիրները: Այդուհանդերձ, այդ խնդիրների առաջնայնությունը տարբեր է եղել. հարցվողներին առաջարկված հիմնախնդիրների ցուցակից հայաստանցիներն առավել հաճախ նշել են գործազրկությունը (45%) և աղքատությունը (10%), մինչդեռ ադրբեջանցիների համար գերակա են եղել տարածքային ամբողջականությունը (53%) և հետո միայն գործազրկությունը (17%): Վրաստանում գործազրկությունը որպես հիմնախնդիր մատնանշվել է պատասխանների 52, իսկ տարածքային ամբողջականությունը՝ 12%-ի դեպքում:

Սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատականները աղերսվել են միգրացիոն տրամադրությունների հետ. Հայաստանում հարցվածների 29%-ը նշել է, որ հնարավորության դեպքում կմեկնեն երկրից այլ վայրում մշտապես, իսկ 64%-ը՝ ժամանակավոր բնակվելու: Ադրբեջանում մշտապես կամ ժամանակավոր բնակության մեկնելու մտադրության մասին են հայտնել համապատասխանաբար 17 և 52%-ը, իսկ Վրաստանում՝ 7 և 47%-ը: Միգրացիոն տրամադրություններն, ամենայն հավանականությամբ, պայմանավորված են եղել նաև արտերկրում աշխատանքին համարժեք վաստակի ակնկալիքներով. իր աշխատանքի վարձատրությունը արդար չի համարել Հայաստանում հարցվածների 70, Վրաստանում՝ 50, և Ադրբեջանում՝ 36%-ը:

2010թ. հարցաթերթում միայն Հայաստանում հղված կարճ հարցաշարով բացահայտվել է նաև հանրության վերաբերմունքը հայ-թուրքական սահմանի բացման առնչությամբ: Այսպես, եթե հարցվածների 49%-ը ակնկալում է դրական հետևանքներ Հայաստանի տնտեսության համար, ներքաղաքական զարգացումների ու Հայաստանի անվտանգության համար դրական ակնկալիքներ ունեն համապատասխանաբար 12 և 7%-ը:

Հարցման արդյունքում հավաքագրված տվյալադարանների վերլուծությամբ կարելի է բազմաթիվ այլ բացահայտումներ անել տարածաշրջանի երկրներում սոցիալ-տնտեսական զարգացումների վերաբերյալ:

ՀՌԿԿ հավաքագրած տվյալների բազաները և հարակից փաստաթղթերը ազատորեն հասանելի են www.crrccenters.org կայքում:

ՀՌԿԿ-ն հետազոտական ռեսուրսների և ուսումնական կենտրոնների ցանց է՝ հիմնադրված 2003թ. Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մայրաքաղաքներում՝ Զարավային Կովկասում հասարակագիտական հետազոտություններն ու պետական քաղաքականության վերլուծությունը խթանելու նպատակով: Երևանի Կոնգրեսի Կարնեգի կորպորացիայի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և տեղական համալսարանների համագործակցությամբ գործող ծրագիրը առաջարկում է հետազոտությունների, դասընթացների և տարածաշրջանային համագործակցության բազմաթիվ հնարավորություններ: Հայաստանում ՀՌԿԿ ծրագրերի մասին տեղեկությունների համար դիմե՛ք.

ՀՌԿԿ-Հայաստան. Երևան 0025, Արթուրյան 52, 3-րդ հարկ, հեռ./ֆաքս՝ 58-13-30, 58-14-50, Էլ. փոստ՝ crrc@crrc.am, վեբ-կայք՝ www.crrc.am:
Վրաստանում և Ադրբեջանում ՀՌԿԿ գործունեության մասին հավելյալ տեղեկությունների համար այցելե՛ք www.crrccenters.org: